ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2011 թ. թիվ 2/1664/

4. ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում գիտական ամսագրերի թվայնացման աշխատանքների մասին

ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշեց.

1. Ի գիտություն ընդունել ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Տ.Զարգարյանի զեկուցումը ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում գիտական ամսագրերի թվայնացման աշխատանքների վերաբերյալ:

2. Նշել, որ կատարվում է ՀՀ ԳԱԱ գիտական արտադրանքն աշխարհին ներկայացնելու խիստ կարևոր աշխատանք, և այդ ուղղությամբ գրադարանի գործունեությունը անհրաժեշտ է ընդլայնել:

3. Հանձնարարել գրադարանի տնօրեն Տ.Զարգարյանին նախագահության նիստում արված առաջարկությունների և քննարկման արդյունքների հիման վրա վերակառուցել զեկուցումը և այն ներկայացնել 2011 թ. ապրիլի 15-ին կայանալիք ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում:

4. Հանձնարարել գրադարանին մեթոդական օգնություն ցույց տալ ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական հիմնարկների գրադարաններին՝ գրադարանավարներին ծանոթացնելով թվային գրադարանի ստեղծման արդի մոտեցումներին:

5. Հանձնարարել գրադարանին և ՀՀ ԳԱԱ պարբերականների խմբագրություններին համատեղ իրականացնել ՀՀ ԳԱԱ համակարգում հրատարակվող պարբերականների թվայնացումը և համացանցում դրանց տեղադրումը:

6. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ բաժանմունքներին մինչև 2011 թ. հունիսի 30-ը կազմակերպել քննարկումներ՝ նվիրված էլեկտրոնային հրատարակչական մոդելներին անցում կատարելու խնդիրներին:

7. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությանը ներկայացնել առաջարկներ ՀՀ ԳԱԱ հրատարակությունները թղթայինին զուգահեռ նաև էլեկտրոնային ձևաչափով հրատարակելու վերաբերյալ:

8. Դիմել ՀՀ ԳԿՆ Բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ համատեղ մշակելու բացառապես էլեկտրոնային տարբերակով լույս ընծայվող գիտական պարբերականները «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկելու չափորոշիչների հարցը:

9. Դիմել ՀՀ կառավարությանը ՀՀ ԳԱԱ հրատարակությունները թվային ձևաչափով ներկայացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ տարեկան բյուջեում նախատեսել որոշ ֆինանսավորում:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ